

## ԱԼՏՈՐԿԻԼ – Եւրոպայի հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչներու սեմինար

Սփիւռք, Փրանսա # Կրթութիւն 14/3/2023



### Հաղորդագրութիւն

Այս օրերուն, Փարիզի հարաւային արուարձաններէն հայահօծ Ալֆորվիլի «Սուրբ Մեսրոպ-Արապեան» վարժարանին մէջ սկիզբ առաւ Եւրոպայի հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչներու սեմինար մը, որ կ'երկարի 6-14 Փետրուար եւ կը համախմբէ աւելի քան 40 մասնակից:

Աշխատանոցը բնական շարունակութիւնն է մօտ ութ ամիս առաջ՝ Մայիս 2022-ին, Աթէնքի «Չաւարեան» վարժարանին մէջ տեղի ունեցած հաւաքին, որ ուներ 20 մասնակից: Այս անգամ մեր դաստիարակները Ալֆորվիլ կու գան՝ բերելով առաջին հաւաքէն ետք աշակերտներուն հետ իրենց ապրած գործնական հմտութիւնները, որպէսզի կարենան իրարու հետ բաժնել այդ փորձառութիւնները, համադրումներ կատարեն եւ նոր ծրագրեր քննարկեն: Համախմբումը առիթ մըն է նաեւ ամրացնելու գործընկերներուն միջեւ արդէն իսկ հաստատուած կապը՝ միշտ հաւատարմով հաւաքական աշխատելաճճի առաւելութիւններուն:



Երկու նախաձեռնութիւնները կը պատկանին Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքին, իսկ սոյն աշխատանոցին կազմակերպական աշխատանքը ստանձնած են «Սուրբ Մեսրոպ- Արապեան» վարժարանի խնամակալութիւնը, տնօրէնութիւնը, ուսուցչակազմը, պաշտօնէութիւնը, ծնողները եւ եկեղեցոյ հոգաբարձութիւնն ու տիկնանց յանձնախումբը:

Նպատակը նոյնն է, մշակել՝ արեւմտահայերէնը մեր աշակերտներուն փոխանցելու նորարար եւ արդիւնաւետ միջոցներ, որպէսզի ան գոյատեւէ եւ զարգանայ իբրեւ ապրող լեզու: Նպատակ մը, որ առկայ է տարբեր համեմատութիւններով՝ սփիւռքի ամբողջ տարածքին:

Աշխատանոցին ընթացքին պիտի արծարծուին բազմաթիւ նիւթեր, ինչպէս՝

- Երեխայակերտն մանկավարժութիւն
- Մանկապարտէզի աշխարհը
- Հաւասարակշռուած եւ ներդաշնակ երկլեզուութեան զարգացումը
- Կարդալու եւ գրելու հանգրուանները
- Կարդալու եւ գրելու նախապատրաստական հանգրուանները
- Ընթերցասիրութեան մշակումը
- Խաղի, երգի եւ թատրոնի անհրաժեշտութիւնը
- Ուսողական եւ գիտական միտքի զարգացումը
- Քննական միտքի զարգացումը
- Դպրոցական եւ արտադպրոցական զարգացումը
- Միջտարիքային փորձառութիւններու կարեւորութիւնը
- Դպրոցէն ներս լեզուական եւ մանկավարժական մշակոյթի մը ստեղծումը
- Հայերէնի արժեւորման չափորոշիչները

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը՝ մանկավարժական ծրագրերու եւ լեզուի պատասխանատուին՝ Տիկ. Անի Կարմիրեանի միջոցաւ, մատը ճիշդ վերքին վրայ դրած է: Այս հաւաքները նախ եւ առաջ սկսած են դառնալ այն շաղախը, որ թով-թովի կը բերէ եւ կը միացնէ Եւրոպայի տարբեր գաղութներու մէջ գործող հայկական վարժարաններու հայերէնի ուսուցիչները՝ ստեղծելով ծանօթացման եւ աշխատանքային ծրագրեր: Նման հանդիպումներու հետեւողականութիւնը ինքնաբերաբար կը գոյացնէ մանկավարժական սկզբունքներու խարխիս մը, որ պիտի ամրացնէ եւ կայացնէ արեւմտահայերէնը ապրեցնելու եւ փոխանցելու մշակոյթ-յատակագիծ մը:

«Սուրբ Մեսրոպ-Արապեան»-ի տնօրէնութիւն



### Հայաստան



Թուսո Սանհայրը պաշտօնապէս բացում է Երկրորդը՝ Գերմանիոյ մէջ



Երեան-Լին թօյցքներ

### Սփիւռք



ՊԵՆՃԻՔԱ – Պրիսէլի մէջ կատարուած է Հայ դատի Եւրոպայի յանձնախումբի նոր գրասենեակին բացումը



ԳԵՐՄԱՆԻԱ – «Հաւատքի ճամբար» երիտասարդական հանդիպումը

### Տարածաշրջան



ՀԱՅԱՍՏԱՆ – Երեանի Պետական համալսարանին մէջ կատարուած է Կրացագիտութեան կեդրոնին բացումը



ԹԹՅՈ ՔԼԱՍՐ. «Հայաստանի հացէին հնչող ազերպայճանական սպառնալիքները անդրունելի են»

### Ազերպայճան



Ժ.-Բ. Պիլսոնի ահազանգը ազերպայճանական սպառնալիքներուն մասին



ԺԸՆԵ – Հայաստանի եւ Ազերպայճանի խորհրդարաններու նախագահներուն հանդիպումը

### Ֆրանսա



Երեան-Լին թօյցքներ



Վարչապետը ընդունած է Ֆրանսա-Հայաստան միջխորհրդարանական բարեկամութեան խումբի նախագահ Անն-Լուան Փրէլի գլխաւորած պատուիրակութիւնը

### Միջազգային



Վարչապետ Փաշինեան ընդունած է ՕԹԱՆ-ի ընդհանուր քարտուղարը



ԼԱ ՔԵՅ – Գոմի կանոնադրութեան՝ Հայաստանի անդամակցութեան պաշտօնական արարութիւնը